ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 21 օգոստոսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Գոռ Անդրիասյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

Քաղաքացի Գոռ Անդրիասյանը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 01.08.2013թ.: Դիմողը խնդրել է որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123^3-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. դիմողի կարծիքով՝ վիճարկվող հոդվածը հակասում է Սահմանադրությանը այնքանով, որքանով չի նախատեսում տուգանքի՝ նվազագույն եւ առավելագույն չափի շեմեր՝ դրանով իսկ խոչընդոտելով վարչական մարմնին վարչական տուգանք նշանակելիս հաշվի առնել կատարված իրավախախտման բնույթը, հասարակական վտանգավորության աստիճանը, խախտողի անձը, նրա գույքային դրությունը, ինչպես նաեւ պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները: Նման պայմաններում, ըստ դիմողի, պատասխանատվության համաչափության սահմանադրական սկզբունքն ապահովվել չի կարող.

2. ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 եւ 69-րդ հոդվածների պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Գոռ Անդրիասյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123^3-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

21 օգոստոսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-21